ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (ՀՆՀ)

(Մրցույթի վերահայտարարում)

Ծրագրի անվանում	- **Երևանի էներգաարդյունավետության և ջերմային վերանորոգման ծրագիր**
Երկիր	- **Հայաստանի Հանրապետություն**
Բիզնես ոլորտ	- **Քաղաքային և բնապահպանական ենթակառուցվածքներ**
Ծրագրի համար (ID)	- **Երևանի էներգաարդյունավետության ծրագիր**
Ֆինանսավորման աղբյուր	- **Եվրոպական ներդրումային բանկ (ԵՆԲ)**
ԵՆԲ վարկ/փոխառություն No.:	- **87.749**
Պայմանագրի տեսակ	- **Նախագծում, մատակարարում և տեղադրում**
Ծանուցման տեսակ	- **Հայտերի ներկայացման հրավեր (ՀՆՀ).** ***«Երևան քաղաքի հասարակական շենքերի համար կաթսաների, ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի, արևային ջրատաքացուցիչների և լուսադիոդային լուսատուների նախագծում, մատակարարում և տեղադրում» ՀՆՀ#B.PVP.SWH.LED-2024/01*** - **ՀՆՀ-ի մաս կազմող լոտերի (պայմանագրերի) թիվը և համարները՝ 4 (չորս) լոտ** ***LOS#1 – «Երևանի №2, №5, №10, №18, №19, №26, №31, №32, №154, №160 և №162 մանկապարտեզների, Երևանի «Հրաչյա Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոնի», «Տիգրան Մեծ» և «Արաբկիր» առողջության կենտրոնների, «Շտապ բժշկական օգնություն №1» և «ԵՐԵՎԱՆ» բժշկագիտական կենտրոնի համար կաթսաների, ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի, արևային ջրատաքացուցիչների և լուսադիոդային լուսատուների նախագծում, մատակարարում և տեղադրում» (ՀՆՀ#B.PVP.SWH.LED-2024/01-1);*** ***LOS#2 – «Երևանի №35, №41, №44, №50, №58, №60 և №62 մանկապարտեզների համար կաթսաների, ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի, արևային ջրատաքացուցիչների և լուսադիոդային լուսատուների նախագծում, մատակարարում և տեղադրում» (ՀՆՀ#B.PVP.SWH.LED-2024/01-2);*** ***LOS#3 – «Երևանի №57, №66, №69, №70, №98, №99, №126, №127, №140, №141 և №143 մանկապարտեզների, բժշկական/առողջության կենտրոնների («ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԿ, «Բագրատունյաց», «Ավան» և «Նորք Մարաշ» ԱԿ-ներ) և «ԹԻՎ 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի» համար կաթսաների,***

	ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի, արևային ջրատաքացուցիչների և լուսադիոդային լուսատուների նախագծում, մատակարարում և տեղադրում» (ՀՆՀ#B.PVP.SWH.LED-2024/01-3); և ***LՈՏ#4 – «Երևանի №76, №88, №89, №90, №91, №95, №97 մանկապարտեզների և «Թիվ 19 Պոլիկլինիկա»-ի համար կաթսաների, ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի, արևային ջրատաքացուցիչների և լուսադիոդային լուսատուների նախագծում, մատակարարում և տեղադրում» (ՀՆՀ#B.PVP.SWH.LED-2024/01-4)*** ***Օբյեկտների գտնվելու վայրի (հասցեների) վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ ներկայացված են մրցութային փաստաթղթերում (Հատոր III. «Պահանջներ»՝ «Տարածքը (հասցեն), որտեղ գտնվում են օբյեկտները»):***
Թողարկման ամսաթիվ	- **2024 թվականի օգոստոսի 16**
Հայտերի ներկայացման վերջնաժամկետ	- **2024 թվականի սեպտեմբերի 20; ժամը՝ 15:00 (Երևանի ժամանակով)**
Մրցույթի լեզուն	- **հայերեն**

Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել **Եվրոպական ներդրումային բանկից («ԵՆԲ»)՝ «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի** ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել **«Երևան քաղաքի հասարակական շենքերի համար կաթսաների, ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի, արևային ջրատաքացուցիչների և լուսադիոդային լուսատուների նախագծում, մատակարարում և տեղադրում (բաղկացած 4 լոտից)»** պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու համար:

Երևան քաղաքի հասարակական շենքերում (**չորս (4) լոտով ընտրված թվով՝ 39 մանկապարտեզ, 9 բժշկական/առողջության և 2 մշակութային կենտրոններ**) **կաթսաների, ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի, արևային ջրատաքացուցիչների և լուսադիոդային լուսատուների նախագծում, մատակարարում և տեղադրում**:

Հայտերի ներկայացման սույն հրավերը հաջորդում է այս Ծրագրի համար **«Գնման ընդհանուր ծանուցմանը»**, որը **2020 թվականի մարտի 31**-ին հրապարակվել է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում հետևյալ հղմամբ՝ **https://www.yerevan.am/en/custom/erewani-energaardyownavetowt-yan-tsragir/**

Երևանի էներգաարդյունավետության ծրագիրն առնչվում է ԵՆԲ վարկային և դրամաշնորհային միջոցների տրամադրմանը Երևանի քաղաքապետարանին, որը ներկայումս իրականացնում է իր հաշվեկշռում առկա շենքերի էներգաարդյունավետության վերականգնման գործընթացը:

Սույնով **Երևանի քաղաքապետարանը («Պատվիրատու»)՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ)** միջոցով հրավիրում է մրցույթի իրավասու մասնակիցներին կնքված Հայտեր ներկայացնել հետևյալ պայմանագրի(-երի) իրականացնելու համար, որոնք ֆինանսավորվելու են փոխառության և դրամաշնորհի միջոցներով՝ **«Երևան քաղաքի հասարակական շենքերի համար կաթսաների, ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի, արևային ջրատաքացուցիչների և լուսադիոդային լուսատուների նախագծում, մատակարարում և տեղադրում (բաղկացած 4 լոտից)» ՀՆՀ#B.PVP.SWH.LED-2024/01** ծածկագրով:

Այս պայմանագրերի վճարումները իրականացվելու են **Եվրոպական ներդրումային բանկի («ԵՆԲ») և ՀՀ կառավարության** համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացը ղեկավարվելու է ԵՆԲ-ի կանոններով և ընթացակարգերով (***«ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի գնումների ուղեցույց (Սեպտեմբեր 2018)»/«Guide to Procurement for projects financed by the EIB (September 2018)»***):

Աշխատանքների շրջանակը պետք է ներառի **ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի, կաթսաների, արևային ջրատաքացուցիչների և լուսադիոդային լուսատուների նախագծում, մատակարարում, տեղադրում, փորձարկում և գործարկում**: Վերոնշյալ ապրանքները պետք է ներառեն ամբողջական երաշխիք ոչ պակաս, քան՝

- **ՖՎ մոդուլներ՝ 12 տարի**,
- **Ինվերտորներ, արևային ջրատաքացուցիչներ և կաթսաներ՝ 5 տարի,** և
- **Լուսադիոդային լուսատուներ՝ 3 տարի**:

Երաշխիքը պետք է ներառի նոր և չօգտագործված սարքավորումների (անսարք սարքավորման կամ անսարք մասի փոխարինման փոխարեն) մատակարարումը և տեղադրումը, ներառյալ նյութի մատակարարումը, տեղադրումը, փորձարկումը և գործարկումը, բոլոր տեսակի փոխադրումները մինչև վերջնական նպատակակետ, մաքսատուրքերը, բոլոր հարկերը, և այլն:

Յուրաքանչյուր լոտի ավարտման ժամկետը՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից տասներկու (12) ամսվա ընթացքում:

Պայմանագրի/լոտի շնորհման որակավորում ստանալու համար Հայտատուները պետք է հիմնականում բավարարեն որակավորման հետևյալ նվազագույն պահանջները յուրաքանչյուր լոտով[1].

1. Հայտատուի վերջին **հինգ (5) տարիների** ընթացքում (**2019-2023թթ.**) նվազագույն տարեկան միջին շրջանառությունը (սահմանված որպես տարեկան շահույթ՝ արտահայտված դրա համարժեք արժույթով, **բաժանած հինգի (5)**, յուրաքանչյուր Լոտի համար պետք է կազմի՝

   LOS#1՝ 195,300,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով);
   LOS#2՝ 109,000,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով);
   LOS#3՝ 195,000,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով); և
   LOS#4՝ 169,300,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով):

Բազմաթիվ լոտերի (պայմանագրերի) որակավորման համար Հայտատուները պետք է բավարարեն իրենց պահանջած լոտերի որոշակի քանակի համակցված պահանջները, որոնց համար նրանք դիմում են (օրինակ՝ երկու լոտի որակավորվելու համար Հայտատուները պետք է բավարարեն երկու լոտերի համակցված պահանջները: Նմանապես, երեք կամ չորս լոտերի համար Հայտատուները պետք է բավարարեն բոլոր համապատասխան լոտերի համակցված պահանջները):

2. Հայտատուն պետք է բավարարի հետևյալ նվազագույն չափանիշները՝

   ա) Վերջին **հինգ (5) տարիների** ընթացքում **(2019-2023թթ.)** առնվազն **35 կՎտ ՖՎ համակարգերի** (տանիքի կամ հատակի վրա տեղադրված) մատակարարման և տեղադրման **մեկ (1) պայմանագրի**՝ յուրաքանչյուր Լոտի համար, իրագործման հաջողված փորձ որպես Գլխավոր կապալառու, Համատեղ ձեռնարկության անդամ կամ ենթակապալառու;

   բ) Վերջին **հինգ (5) տարիների** ընթացքում **(2019-2023թթ.)** հաջողված փորձ որպես **ՖՎ համակարգերի նախագծող**, որը պետք է լինի **առնվազն 28 կՎտ յուրաքանչյուր Լոտի համար**:

[1] ***Մանրամասն տեղեկություններ որակավորման պահանջների վերաբերյալ ներկայացված է Մրցութային փաստաթղթում (Հատոր I.ii. «Մրցույթի տվյալներ»):***

3. Յուրաքանչյուր Լոտի համար Հայտատուն պետք է տրամադրի համապատասխան որակավորված անձնակազմ հետևյալ կերպ՝

ա) **Ծրագրի ղեկավար**՝ նվազագույնը **տաս (10) տարվա** ընդհանուր աշխատանքային փորձով, որից առնվազն **երեք (3) տարին** նմանատիպ աշխատանքներում և առնվազն **մեկ (1) տարին** որպես նմանատիպ աշխատանքների ղեկավար:
բ) **Գլխավոր նախագծող***, ՖՎ համակարգերի ճարտարագետ-էլեկտրիկ՝ առնվազն **հինգ (5) տարվա** ընդհանուր աշխատանքային փորձով, որից առնվազն **երեք (3) տարին** նմանատիպ աշխատանքներում և առնվազն **մեկ (1) տարին** որպես նմանատիպ աշխատանքների նախագծող:
գ) **ՖՎ համակարգերի փորձագետ***՝ առնվազն **երեք (3) տարվա** ընդհանուր աշխատանքային փորձով, որից առնվազն **երկու (2) տարին** նմանատիպ աշխատանքներում:
դ) **Արևային ջրատաքացուցիչների փորձագետ***՝ առնվազն **երեք (3) տարվա** ընդհանուր աշխատանքային փորձով, որից առնվազն **երկու (2) տարին** նմանատիպ աշխատանքներում:
ե) **Կաթսաների փորձագետ***՝ առնվազն **երեք (3) տարվա** ընդհանուր աշխատանքային փորձով, որից առնվազն **երկու (2) տարին** նմանատիպ աշխատանքներում:

Երկու, երեք կամ չորս լոտերի համար որակավորվելու համար անձնակազմի (բ); (գ); (դ) և (ե) պաշտոնները 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ լոտերի համար պետք է համալրված լինեն տարբեր անձերով:

4. Հայտատուն պետք է ցուցադրի իրացվելի ակտիվների, վարկային գծերի կամ այլ ֆինանսական աղբյուրների (բացի պայմանագրային կանխավճարներից և ընթացիկ պարտավորություններից) հասանելիություն կամ առկայություն՝ յուրաքանչյուր Լոտի համար Հայտատուի ֆինանսական ռեսուրսների պահանջները բավարարելու համար հետևյալ չափով՝

ԼՈՏ#1՝ 21,700,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով);
ԼՈՏ#2՝ 12,000,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով);
ԼՈՏ#3՝ 22,000,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով); և
ԼՈՏ#4՝ 19,000,000 ՀՀ դրամ (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով):

5. Երկու և ավելի գործընկերներից բաղկացած համատեղ ձեռնարկությունները և Կոնսորցիումները պետք է միասին բավարարեն վերը նշված որակավորման բոլոր չափանիշները, ինչի համար անհրաժեշտ է ավելացնել/գումարել յուրաքանչյուր գործընկերոջ համապատասխան ցուցանիշները՝ համատեղ ձեռնարկության ընդհանուր կարողությունը ստանալու նպատակով: Միևնույն ժամանակ, ՀՁԿԱ-ի (համատեղ ձեռնարկություն, կոնսորցիում, ասոցիացիա) առնվազն մեկ անդամ պետք է բավարարի տարեկան միջին շրջանառության և ֆինանսական միջոցների պահանջների առնվազն 60%-ը, մինչդեռ ՀՁԿԱ-ի մյուս բոլոր անդամները պետք է բավարարեն նույն պահանջների առնվազն 30%-ը: ՀՁԿԱ-ի բոլոր գործընկերները միասին և առանձին պարտավորություն են կրում պայմանագրային պայմանների համաձայն պայմանագրի իրականացման համար:

6. **Արտադրողները պետք է բավարարեն հետևյալ նվազագույն չափանիշները՝**

Ունենալ տարեկան առնվազն **3000 տիպիկ ՖՎ վահանակներ** արտադրելու արտադրական գծերի հզորություն **վերջին հինգ (5) տարիների** ընթացքում **(2019-2023թթ.)** և համապատասխան Լոտի համար **ՖՎ համակարգերի** տեղադրման համար առաքման ժամանակացույցին համապատասխանելու կարողություն: Հայտատուն պետք է տրամադրի այն արտադրողների ցուցակը, որոնցից ձեռք են բերվելու և տեղադրվելու են սարքավորումները:

Իրավասու տեղական Կապալառուներին/Համատեղ ձեռնարկություններին/Կոնսորցիումներին նախապատվություն **չի տրվելու:**

Հայտատուները կարող են հայտեր/մրցութային առաջարկներ ներկայացնել մեկ կամ մի քանի լոտերի (պայմանագրերի) համար: Պահանջներին բավարարելու համար Հայտատուն պետք է համապատասխանի համապատասխան լոտերին ներկայացվող ընդհանուր որակավորման պահանջներին, որոնք ենթակա են դիտարկման: Լոտերի առաջարկվող համադրությունը պետք է համապատասխանի **միջին տարեկան շրջանառության, ֆինանսական ռեսուրսների, անձնակազմի պահանջարկի**, ինչպես նաև առնվազն **35 կՎտ հզորությամբ ֆոտովոլտային համակարգերի մատակարարման և տեղադրման** որակավորման ընդհանուր պահանջներին:

Հայտատուները կարող են հայտեր ներկայացնել մեկ կամ մի քանի լոտերի (պայմանագրերի) համար, ինչպես սահմանված է մրցութային փաստաթղթերում: Եթե Հայտատուները ցանկանում են առաջարկել զեղչեր մեկից ավել պայմանգիր շնորհվելու համար, դա հնարավոր կլինի այն դեպքում, եթե այդ զեղչերը ներառվեն «Հայտի ձևում»:

ԵՆԲ-ի վարկային միջոցներից ֆինանսավորվելիք պայմանագրերի շնորհման մրցույթը բաց է բոլոր երկրների ընկերությունների համար: ԵՆԲ-ի ֆինանսավորման միջոցները չեն կիրառվի անձանց կամ կազմակերպություններին որևէ վճարման կամ ապրանքների որևէ ներմուծման համար, եթե այդպիսի վճարումը կամ ներմուծումն արգելված է Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի որոշմամբ՝ ընդունված Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության Գլուխ VII-ի համաձայն:

Մրցույթն անց է կացվելու **ազգային մրցութային սակարկությունների (ԱՄՍ)** ընթացակարգի համաձայն, որը սահմանված է ԵՆԲ-ի Գնումների ուղեցույցում **(«Գնումների ուղեցույց՝ *«ԵՆԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի գնումների ուղեցույց (Սեպտեմբեր 2018)»/«Guide to Procurement for projects financed by the EIB (September 2018)»*[2]:** Մրցույթն անց է կացվելու «մեկ փուլ» մրցութային ընթացակարգերով՝ նախագծման, մատակարարման և տեղադրման համար՝ հետորակավորումով, և այն բաց է բոլոր հայտատուների համար բոլոր երկրներից, բացառությամբ՝ այն հայտատուների, որոնք ընդգրկված են ԵՆԲ-ի արգելված ընկերությունների ցանկում: Ի լրումն, խնդրում ենք ուշադրություն դարձնել Գնումների ուղեցույցի 1.5 կետի վրա, որով սահմանվում է Բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

Հայտերը պետք է ուղեկցվեն **Հայտի երաշխիքով (Բանկային երաշխիք),** ինչպես նշված է մրցութային փաստաթղթերի **«Մրցույթի տվյալների» 14.1 ենթակետում**:

ԼՈՏ#1՝ 2,600,000 ՀՀ դրամ արժեքով (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով՝ մրցութային աառաջարկի երաշխիքի թողարկման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի թողարկման կուրսով)**;**
ԼՈՏ#2՝ 1,500,000 ՀՀ դրամ արժեքով (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով՝ մրցութային աառաջարկի երաշխիքի թողարկման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի թողարկման կուրսով);
ԼՈՏ#3՝ 2,600,000 ՀՀ դրամ արժեքով (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով՝ մրցութային աառաջարկի երաշխիքի թողարկման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի թողարկման կուրսով); և

---

[2] **«Գնումների ուղեցույցը»** հասանելի է առցանց ԵՆԲ-ի կայքում
https://www.eib.org/attachments/strategies/guide_to_procurement_en.pdf
https://www.eib.org/en/publications/guide-to-procurement.htm

LOS#4՝ 2,300,000 ՀՀ դրամ արժեքով (կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով՝ մրցութային աառաջարկի երաշխիքի թողարկման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի թողարկման կուրսով):

Մրցույթի շահագրգիռ իրավասու հայտատուները կարող են **անվճար** ստանալ մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը (միայն էլետրոնային տարբերակ) **հայերեն լեզվով՝** ներկայացնելով գրավոր դիմում(*) ներքոհիշյալ հասցեով՝ խնդրելով տրամադրել ***«Երևան քաղաքի հասարակական շենքերի համար կաթսաների, ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի, արևային ջրատաքացուցիչների և լուսադիոդային լուսատուների նախագծում, մատակարարում և տեղադրում» ՀՆՀ#B.PVP.SWH.LED-2024/01*** ծածկագրով մրցութային փաստաթղթերը (մրցութային փաստաթղթերը կուղարկվեն մրցույթի շահագրգիռ մասնակիցներին ֆայլերի փոխանցման էլ.համակարգի միջոցով):

Հայտատուն պետք է հոգա իր Հայտի նախապատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը: Պատվիրատուն ոչ մի պատասխանատվություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ մրցութային գործընթացի ընթացքից կամ արդյունքից:

Վերը նշված հասցեն է՝

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ)
Ում՝ Մարտին Չարյանին, «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի գնումների մասնագետ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան 0010, Փ.Բուզանդի 1/3
Հարկ/Սենյակ՝ 6 հարկ, 618 սենյակ
Հեռ՝ (+374 11) 51-50-07 (ընդունարան)
(*)**Էլ.փոստ (**գրավոր դիմումի համար**)՝ martin.charyan@yerevan.am; cc: narine.gyoletsyan@yerevan.am; m.harutyunyan@yerevan.am**